


Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHAÏOYCE

(EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ԵՂԻՊՏՈՍ

Տարեկան դրոշմը 30

ԱՐՏԱՍՏՆԱՆ

Տարեկան ֆրանկ 10

Փոստատարի օժիտը 3 ֆրանկ 10 ցենտ

Գրքերի և թղթերի վաճառք

Ձի հրատարակումը անապատները
և չե՛ն սրտի :

ԱՐՁԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

Բաժանորդագրությունը կանխիկ է, իսկ
ժամանակակից կ'ընդունվի մասնա-
ւոր համաձայնությամբ :

Թե՛ ԱՐՇԱԼՈՍՈՍԻ և թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ նիստիս խնդրոց համար
պե՛տ է դիմել ներքազմութեան հասցեով
քերթիս Մասնախարարին, որ է՛

ՊՈՒՊՐՈՐԴ ՓԱՓԱՋԵԱՆ

— ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԾԱՐԱԹ ՕՐԵՐԸ —

— Յօդուածագրները ուղղակի պատասխանու-
ող են իրենց գրածներու —

— ՅԱՏԸ 20 ՓԱՐԱ ՈՂՁ —

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ԽՄԲԱԿՐԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԱՊՐԱՍՏ. — Ա՛յս է «Արշալոյս» Պոլսական Նամա-
կանի Հեղինակին ծածկանունը, որուն համար ասկէ ա-
ռայ խոսած է ինք :

Ապրաստ, մին է այն հեղինակաւոր՝ անձնուէր եւ ֆա-
ջածանօր դեմքերէն, որոց նմանը դժբաղդաբար հայրիսնը
չաս ֆիլ ունի իր ծոցին մէջ :

Այս պատճառաւ Արշալոյսի Խմբագրութեան համար, իր
Պոլսոյ պատասխալ Խմբագիրը՝ Ապրաստ՝ «Անփան կաթէ»
մը պիտի ըլլայ : Այս է պատճառը որ՝ Ապրաստի գրածնե-
րէն բառ մը իսկ չ'պիտի փոխուի Խմբագրութեան կողմէն .
որովհետեւ նա մեծ դաստիարակիչի եւ շատ ու շուրջ խոր-
հող փորձառուներու դասուն կը պատկանի :

Ապրաստի գրածներէն բառ մը իսկ — բացի սպագրական
սխալներէն — չ'պիտի փոխուի, ինչպէս ըսինք, երբ նոյն
իսկ իր գրածներով քերթիս Խմբագրութեանը կազմող ան-
դամաց միոյն կամ միւսին գաղափարներուն, համարու-
մներուն եւ զգացումներուն հակառակ վերաբերումներ ու-
նենայ : Այս քիչ այս Խմբագրական գոնողութիւնը «Նորու-
թիւն» մը ըլլայ հայ յրագրական ասպարէզին մէջ, որուն
համար՝ փորձառութեամբ զեւեմք թե՛ շատ ֆիլ համակիր
խմբագրողներ կան մեր մէջ :

ԽՄԲ :

Առաջին քայլը զոր առաւ Իզ-
միրեան վերջնորդ Պատրիարքը, ի-
րեն վախճուէլ քայլ մ'էր :

Այդ քայլը երկաթեայ Պատ-
րիարքի արեւոտը արժանացնող իր
արարքներէն մէկը պիտի նկատուի
յաւէտ :

Իր ընտրութենէն անմիջապէս
ետքը չուշացաւ Կայսերական վաւե-
րացումը, որուն պիտի յաջորդէր
անդամակի ընդունելութիւնը այն
Անձէն որ հայակերներուն Հրոսա-
պետն եղած էր ու անհայտ թշնա-
մին Իզմիրեանի :

Հիմա, իր աքտորածը վերա-
դարձած էր ու ի՛նչ վերագործ :
Ս. Համբարձումի դահուն վրայ նախան-
ձած էր այդ սրտազեղ՝ համազգա-
յին ընդունելութեան որով Սիօնի
Աքտորականը իր յաղթական մուտքը
կը գործէր Բիւզանդիոն :

Եւ սակայն պէ՛տք էր զինքը
հրաւիրել Կայսերական ունկնդրու-
թեան : Անձնական ատելութիւնը
չէր կրնար արգելք ըլլալ այս ա-
ւանդական արարողութեան :

Ինք Սահմանադրական Կայսր
մ'էր այլ ևս, և Իզմիրեան՝ Սահ-
մանադրական Պատրիարք մը :

Այս պաշտօնական այդ ունկնդ-
րութեան համար որոշուեցաւ անց-
եալ երեքշաբթին :

Պալատին, որոյեալ ժամուն
կառք մը (մէկ հատ, փոխանակ ե-
րեքի, ինչպէս սովորութիւն էր) և
յատուկ պաշտօնատարներ զրկուած
էին Գում Գափու :

Ուրիշ բաղձութիւ կառքեր ալ,
Պատրիարքարանի կողմէ պատրաս-
տել տուած էին՝ որպէսզի Հայոց
Պատրիարքին Հետեւորդները փո-
խադրէին Գում Գափուէն ելլալը :

Ամէն բան պատրաստ էր : Ժո-
ղովականները՝ անոնք որ պիտի ըն-
կերանային Պատրիարքական Թափո-
րին՝ հոն Պատրիարքարանի դահլի-
ճին մէջ կը սպասէին մեկնուի նը-
շանին :

Իզմիրեան՝ վերադր գլուխը դը-
նելու վրայ էր և թափօրը ճամբայ
կ'ըլլալու վրայ :

Եւ ահա հեռագիր մը կը հաս-

նի ելլալուէն . Վարչապետ Բեամիլ
Փաշա, այդ հեռագրով կ'իմացնէր
թէ, մասնաւոր պատճառներով,
Կայս. Ունկնդրութիւնը Ուրբաթ օր-
ուան յետաձգուած էր, Սէլամըզի
Արարողութենէն վերջ :

Անակնկալ մը որ շատ ցուրտ
աղդեցութիւն ըրաւ Պոլսոյ Հայու-
թեան վրայ : Ամէն ոք հետաքրքիր
էր այս անհաճոյ կատակին գաղտ-
նիքը գիտնալու :

Ոմանք ըսին թէ Պալատին մէջ
երևան ելած խռովութիւն մ'էր ա-
տոր շարժանիքը : Ուրիշներ՝ թէ
այսչափ հազար ոսկի պարունակող
անտուկի մը յայտնումն էր յետա-
ձգման պատճառը : Ոմանք ալ
պնդեցին թէ Հին Գլուխ Համբարձ-
ումը չուզելով մասնաւոր ընդունելութիւն
ու պատիւներ ընել՝ ուզել է որ
Ուրբաթի նախազէն ետքը, պարզ
այցելուի մը պէս, Իզմիրեանն ալ
Կայս. Հիւրանոցը գտնուի, և սա՛նկ՝
կայսերական շնորհաբեր թեմեմեանով
մը վերջնայ՝ Սուլթանին վրայ կա-
պարի պէս ճնշող այս պարտակա-
նութիւնը :

Ո՛րն ալ ըլլայ պատճառը, ա-
տոր առաջ բերած անհաճոյ տպա-
ւորութիւնը չի բարեխառնուիր :

Իսկ զժողովութիւնը ծայր տը-
լաւ ժողովուրդի կարգերուն մէջ,
և ամէն ոք կը սկսէր մտածել թէ
ի՛նչ գերք պիտի բռնէ Իզմիրեան
այս պարագայիս մէջ :

Նոյն օրուան համար որոշուած
Ազգ. Ժողովի գումարումը պիտի
յետաձգէր և՛ համակերպէ՛ր պիտի՝
երթալ ելլալը Հիւրանոցը :

Բայց, ուրիշ արգելք մ'ալ կար
մէջտեղը :

Ըստ սովորութեան Պատրիարքը
Կայս. անդամակի ունկնդրութենէն
վերադարձին պիտի այցելէր նաև
Բարձր. Գումը :

Եւ Իզմիրեան այս երկու պատ-
ճառները բաւական զօրաւոր գտաւ,
ինքն ալ իր կարգին չընդունելու
Ուրբաթի համար եղած որոշումը :

Իր մերժումը carrément կը
հաղորդէ Վարչապետին, խնդրելով
որ Ուրբաթէն տարբեր օր մը կատար-
ուի իր ընդունելութիւնը :

Տեսնե՛նք : Տեսնե՛նք թէ այս
առաջին ընդհարումը անուշ տե՛ղը

պիտի կապուի թէ Համբարձում-Իզ-
միրեան հակառակութիւնը պիտի
չեղաւ, գոտութեան խնձոր մը պի-
տի ըլլայ :

«Երկու պիտար պատ է պատուեր»
կ'ըսէ հայկական առածը :

Ու կը սպասենք որ դիւանա-
դիտական միջին ճամբայ մը գտնու-
ուի գործին մէջէն ելլելու՝ փրկե-
լով երկու կողմերուն ալ արժանա-
պատուութիւնը :

Հապճեպով գումարուած Ազգ.
Ժողով մը ունեցանք :

Խակ ու անփորձ Երեսփոխան-
ներ, որոնք անճարակ շարժումներ-
նին չեն կրնար պարտիկ :

Չորս հինգ նիստ զոհեցին նախ-
նական գործողութեանց ու կաթողի-
կոսական պատուիրակի ընտրութեան :

Ու՛ վերջապէս՝ փոխանակ իրենք
ընտրելու, Պատուիրակը ինքզինք
ընտրեց. երդում կատարում ընե-
լով որ էջմիածնի մէջ, ոգի ի բռին
պիտի աշխատի Իզմիրեանի ընտ-
րութիւնը յաջողցնելու :

Ու, հեռագիրներէն գիտենք
թէ իր այս խոստումը պահեց, եւ
թէ այնքան բարեմիտ ըլլանք հա-
ւատալու թէ Ազգ. Ժողովի պատ-
ուիրակը կրցաւ ո՛ր և է աղդեցու-
թիւն ունենալ ընտրական գործողու-
թեանց պահուն՝ միւս պատուիրակ-
ներու վրայ :

Իզմիրեան պատրիարք կ'ըն-
տրուէր այն օրն իսկ ուր ընդհան-
րական Կաթողիկոս և Ծայրագոյն
Պատրիարք Համազգական Նախա-
մեծար Աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ
էջմիածնի՝ կը հռչակէր զինքը Վա-
ղարչապատի Վանքին գմբէթին ներ-
քեւ համախմբուած Պատուիրակնե-
րու Խումբը :

Ա՛յս էր Ազգին Կամքը որ ճըշ-
գիւ գործադրուեցաւ :

Խակ Դուրեան կ'ըլլար կանդի-
դատ, ըստ Բօջօճէնիսի բացատրու-
թեան :

Ասոնք աղէկ՝ գոհացում տալու
համար աղիկամի փափաքներու, ան-
հաշիւ, անհեռատես դիտումներու :

Անո՛ր համար Իզմիրեանին տըր-
ուեցան քուէներու մեծամասնու-
թիւնը և անոր համար Դուրեանը
կանդիդատ կարգեցին որ, իբր թէ,

Չարը այս վերջինին պիտի շնորհէր իր վեցում. — նկատելով որ Իգլիբը անին անձը անհաստ է Հանուրը Ռուսաստանեայց կայսեր:

Ի՞նչ հեռատես քաղաքականութիւն՝ սա մերինը:

Իբր թէ կարելի ըլլար դուշակել Չարին դիտաւարութիւնը, իբր թէ մեր այս նկատումները յովտի մը չափ արժէք ունենային յայտ մասկովեան քաղաքականութեան:

Բարեմիտ ազգ: Բանդէ՛տ Երեսփոխանութիւն:

Եւ մինչ մենք այս գուշակութիւններով ու նկատումներով կ'օրորուէինք անգին կը փճանայ այն ժողովուրդը որուն համար կաթնուղիկոս, Պատրիարք, ժողով ու Խորհուրդ կ'ընտրուի:

Ազգը կը փճանայ կոր Սովէն, զբացի ազգերու Յարձակումներէն, Խժդժութիւններէն որոնք վերջ չեն գտներ:

Մահագոյժ Ղօղանջը կը լսուի հեռուէն:

Ու, ո՛չ մէկ արմատական միջոց, ո՛չ մէկ հիմնաւոր դարման: Ժողովուրդը անօթի է Հայաստանի մէկ ծայրէն միւսը:

Թերթերը ամէն օր լինք են արհաւիրաց թղթակցութիւններով ու ընդ գուժկանը կը հանդիսանան Ազէսներուն:

Իսկ թուրք թերթերը հերքում հերքումի վրայ կը տեղան՝ ապացուցանելու համար թէ սո՛ւտ է սո՛ւտ այդ սովի ու կոտորածի լուրը:

Ո՛հ, այս հերքումներէն իւրաքանչիւրը մէյմէկ նախատինք է հայ ազգի ճակատին նետուած:

Նախատինք այն խեղճիկ շարժումներուն որոնք երևան եկան Յուլիս 11 էն առջին:

Նախատինք այն Եղբայրութեան ու Հաւասարութեան Սկզբունքներուն, զորս հալած իւրի պէս մեզի կ'ընդունին:

Ու Հայ Ազգը կը հեծէ, կը հեծէ՛ լալազին՝ հասկնալով որ խառուած է՝ այս անգամ ալ նոր ձևի մը սակ:

Հայ Ազգը այսօր ալ տխուր հարկին մէջ է կրկնելու ինչ որ դարեր առաջ ըստած է Վահրամ Պահլավաունի բերնով:

«Ո՛հ ապշտօխն, ո՛հ կուրուրիսն, ո՛հ նախասինք աններեղիք»

ԱՊՐՄԱՄ

Կ. Պօլիս 11 Նոյեմ. 908

ՄԵՐ ԲԱՃԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր արտասահմանի և Եթովպիոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին փութացնել իրենց բաժնեկիներըն, նկատելով որ տարւոյն վերջին ամիսը կը թեւեղանայ:

Այսպէսով մեր յարգելի բաժանորդները մեզի խնայած կըլլան մասնաւոր դիմումներու առթիւ ըլլալիք ծախքերէն և ժամաւճառութիւններէ:

ՏԷՐ ՂԵՒՈՒՆՂ

ԵՊԻՍԿՈՊՈՍ ԺԻՅԱՆԵԱՆ

Փ Ր Կ Ո Ւ Ա Մ Թ Ո Ւ Ղ Թ Ե Ր Է Ն

ՅԻՇԷ ԶԻՍ



Երբ վարդաւանս Արշալոյս, արծաթաւ փարսերով, Մասեայ պղպեղն բարձունքին՝ կը ծագէ նոր առաւօտ, Ու գիշերն ալ մեծկոն իր սեւաքոյր խնկերով, Անհունին մեջ կանկեթի՝ բոցեղով դեղնելոս, Երբ դայալեկ սոխակներն հովիտներու հովանոս, Երբ ձայնակցին հայ կոյսեր սիրաբարձիկ երգերուդ՝

Ա՛ն, անուշիկ Հայրենիք. սիրասարփիկ իմ Գաւառ, Ես կը մաշիմ կարօտով... ա՛ն, յիշե՛ գիս, մի՛ մոռնար:

Յիշե՛ իմ սիրտ այն վայրկեան՝ երբ դիմել բաղդըն անրվեր, Մե՛կ հարուածով գիս խեց քա Մայր ծոցի գրգասուն, Յիշե՛ քե՛ ցաւ, վիշտ, Ախար, սեւ օտեր սեւ սարիներ, Կը կործանեն ժաւ առ ժաւ արիս վառ յոյսն ու ախն... Երբ կը կայ, ձայն հարաւոր՝ որ անդադար փեղ կ'ըսէ:

— Ա՛ն, անուշիկ Հայրենիք, սիրասարփիկ իմ Գաւառ, Ես կը մաշիմ կարօտով... ա՛ն, յիշե՛ գիս, մի՛ մոռնար:

Յիշե՛ գիս՝ երբ հայ կուսակ, քա իր քրտիկ փափկաւուն, Եւ իր անուշիկ ձայնով անուշ երգերով՝

Դեղածիծաղ դաշտաց մեջ պարեն՝ կայսուն գեղաւնոյն՝ Դու խնկերին զարդարած խորհրդաւոր փունջերով

Յիշե՛ քե՛ ա՛յն երգոց մեջ մոռնալ մը կայ խառնուած՝ Մոռնալ դժբաղդ սարագի մ'անհուն սիրովի առցումս...

— Ա՛ն, անուշիկ Հայրենիք, սիրասարփիկ իմ Գաւառ, Ես կը մաշիմ կարօտով... ա՛ն, յիշե՛ գիս, մի՛ մոռնար:

Ու մի՛ մոռնար՝ երբ այս տղ, այս վայրերուս մեջ անյոյս՝ Սիրքս զուած. Ես անյոյս, անխոփեկ գիս սեւ հողեր:

Կաւ երբ լսես քե՛ վայրի վարդի բուրբի մը մեկարայս՝ Դեղածիծաղ վրայ ցուրտ՝ իրեն քերթիկն է քաջար:

Դիտե՛մ. գիս ա՛յ չե՛ս տեսնէր... քայց իմ հողիս կեկոյակի:

Վառուած սիրոյ կրակով, շուրջ պիտի սաւառնի՝ Ու փեղ ըսէ՛ Հայրենիք. սիրասարփիկ սուրբ Գաւառ:

ՀԱՅՈՐԴՆԵՐ ԲԵՂ ԳՈՆ ԵՊԱ... ա՛ն, յիշե՛ գալն... մի՛ մոռնար:

(Տե՛ս «ՑԱԻԵՐԴԻ ՀԱՅՐԵՆԵԱՍ» էջ 105-106)

ԽԱՌՆԱՐԱՆ

Ուրախութեամբ լսեցինք թէ՛ հմուտ ուսուցչի մը կողմէն մարմնամարզական դասեր կ'աւանդուին կոր եղբեր տեղւոյս Գաւառեան վարժարանի ուսանողներուն և ուսանողուհիներուն: Այս լուրը բերկրաւիթ է, մանաւանդ անով որ՝ այդ նորակառուց չորս պատերէն եթէ ո՛չ ուրիշ բան գտնէ ըմբիշի մօտ հայութիւն մը դուրս պիտի գայ, շնորհիւ պիտի տեսնէ մը, որմէ քիչ մ'ալ հոգեմարդի նըման բաներ մը սպասելու իրաւունք ունի անժխտելի կը թափ ինծի: Բայց աշակերտներու ծնողներէն և եղիպտահայուն բաղդին նախագահող ազգային իշխանութեան անհի խտտապահանջ չ'ըլլանք և անկեղծօրէն խոստովանինք թէ մարմնամարզութիւնն ալ իր մէկէ անհի օգուտներն ունի: Արդարեւ, կեանքի երեւելի և աներեղութիւն, նախատեսելի և անհասելի հանգամանքները ի նը-

կատի առնելով, մարմնոյ դիւրաթեթութիւնն ու ճկունութիւնը, ցատկը, վազելու, մաքցելու գիւրդութիւնները խոտելի բաներ չեն: Աւելի լաւ է մի որ և է բան գիտնալ, քան ոչինչ գիտնալ Հիմա որ, ընդ հովանեաւ Սահմանադրութեան, հայկական բանակ մ'ալ պիտի ունենանք, ասկէ 20-30 տարի ետքը մեր ազգային արժանապատուութիւնը անչուշտ քիչ չպիտի պանծայ տեսնելով գեղակալմ' և յաղթանդամ մարտիկներ-սերունդ մարմնամարզի գալ սարուան շրջանաւարտներու, որոնք կոչուած պիտի ըլլան Հայ անունը փառաւորելու և Հայրենիքի դրօշակը բարձր բանելու պատերազմի գաշտերուն վրայ: Եւ երբ խորհիք որ Վառու՞միտը՝ առաջ մարմնոյ մէջ՞ ըստուած է ի սկզբանէ անտի, մեր այդ հրացանակիր և թնդանօթածիք հուժկու երիտասարդութիւնը տեսնելով իրաւունք պիտի տանք մեր ներկայ դպրոցավարիչներուն, որոնք մարմ-

նամարդը կը նախագասն ամեն տեսակ մտապաշարի...

Եւ ահա այս միջոցիս, առջեւէս կ'անցնի շղուտ հակայ ֆէլլա՛ն մը՝ գլխուն վրայ պանրալից ահագին տաշտ մը բեռցուցած և նորեփ ֆուլի երկաթեայ երկու կուժեր կուշտին վրայ սեղմած՝ երգելով կ'անցնի անայլալ և անհոգ:

— Ահա ՄԱՐԻ մը, կը դրեմ խոշոր խոշոր տառերով: Ի՞նչ հրաշալի, ստեղծիչ միտք ունենալու էր:

Եւ ահա յանկարծ անկիւնէ մը դուրս կը ցատկէ... Զնդեթութեան անօրէնը, կը քիչ, գողգողաբայլ, աչքերը շրտաւոր քաղաքանք տեսնուելու անկողով:

— Ահա չորս անամ մարդայի ժող մը, կը յաւելում հազիւ ընթեռնի գիծերով: Ի՛նչ ընկերութիւն, անբա՛ղք բաժնետէրեր:

Նաև անբաղդ մարդկութիւն, որ հաշարաւոր դարեր ասդին անգին խարխալէ, գլուխը հազար ու մէկ քարի զարնէլէ ետքն ալ տակաւին մինչև այսօր չգիտցաւ թէ ս'րու յանձնելու է զինք լուսաւորելու հոգը...

Բայց ձգենք մարդկութիւնը և մենք մեզի նայինք:

Մեր վերածնունդը մեզի աւելի քան երբէք ընդգրկել կուտայ գաղափարի անվերապահ ազատութիւնը, ինչ որ կը նշանակէ գործելու անվերապահ ազատութիւնը: Գործելը սխալ չհասկցուի. մարդ մի միայն ձեռքով, ոտքով չգործեր. գրելով, խօսելով, կարգալով ալ կը գործէ, և՛ շատ անգամ վերջին միջոցները լաւագոյններն են նպատակին հասնելու համար: Բարեկամներ ունիմ, որոնք դադարաւոր ազատութեան շատագով են, բայց դործելը կ'արգիլեն, ինչ որ հակասութիւն մ'է: Վասնզի ինչպէս առանց գաղափարի այսինքն՝ առանց խորհելու գործել ապուշութիւն կը կոչուի, այնպէս ալ առանց գործելու խորհիլ ողջ ողջ թաղութիւն տարբեր նշանակութիւն մը չունենար՝ առ նըւազն: Նախորդ գրութեամբ մը լաւալիսական ճշմարտութիւն մ'ըստի. այն է թէ՛ անկարելի խորհիլը արգիլել, ուստի երբ խորհողները, հրապարակագիրները, բանաստեղծներն ու հեղինակները կը սեն Վորձէ բայց մի գործերն տըրամարանութեան դէմ մեղանշած կ'ըլլան. բռնապետութիւնն ալ երբ չորս պատերազմ մէջ կ'ամրափակէ իր զոհը, աւելի բան մը չ'ըսեր անոր... Նպատակէս դուրս է այս խնդրոյն վրայ ծանրանալ այս անգամ, ուստի կը դառնամ իմ նիւթին:

Առողջ միտքը, կ'ըսեն ըսինք, առողջ մարմնոյ մէջ կը գտնուի: Բայց մարմնային առողջութիւնը մարմնամարդով կ'ստացուի աւելի: Ուրեմն մարմնամարդութիւն սորվինք և մարմնամարդութիւն սորվեցնենք մեր զաւակներուն: Եւ միւս կողմէն, որովհետեւ խորհողները ընդհանրապէս վատաւոր կ'ըլլան, հետեւաբար մտքով հիւանդ ըստ առածին, մեր ազգային և պետական գործերուն զեկը յանձնենք, ուրեմն, ոչ-

խորհող ճիւղ ճիւղան էրիտասարդներուն ձեռքը, մասնաւոր յորդորանքներով որ երբէք չխորհին, եթէ չ'են ուզեր դաշնակէց ըլլալ ժամանակէն առաջ, այսինքն՝ քառասունէն առաջ։ Վասնզի, ինչպէս ամեն ոք գիտէ, այս տարիքն է վերջին սահմանը դիւրաթեքութեան, թխահեքութեան, մազլցողութեան և խել մ'ուրիշ ութեանց, ի բաց առեալ խոհակամութիւնը, որ հաշիւ այն ատեն կ'սկսի իր խղճային դանդաղութիւնը թօթախիւրով գլուխը դուրս ցցելու...

Գաղափարի ազատութիւնը այս խօսքերը ըսել կուտայ ինծի։ «Ոչ-գրարանացին ի ձեռնը...»

Իսկ եթէ պայտօնաբարձութեան առաջարկին վրայ կը խնդար, գիտցած եղիք որ կը խնդար ճիշդ այն բանին վրայ որուն սպասարկու եղած էք յորմէհետէ աշխարհին լոյսը կը վայելէք, և զոր կ'ուսուցանէք մեր դպրոցներու մէջ։ Ասկէ զատ, իմ հացին ալ իւր քսած կ'ըլլաք, վասնզի ես ալ երբէք չլրջայ մարտնչ այդ Առաջիկայի քառնի մարմնոյ մէջ և ապուշ ասացուածը։

Առ այժմ այսչափ։ Ուրիշ անգամ քիչ մ'աւելի կը պեղենք այս գետինը, ալ ու ձախ ալ բրէշի մի քանի հարուածներ տալիս մինչև որ ըսելիքս ըսեմ։

Ա. ՊԱԼԵԱՆ

ԾՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Սօֆի Բ. Նահապետեան, Տիարք Նահապետ և Գէորգ Բ. Նահապետեան, Օր. Հովիտի մէջ Բ. Նահապետեան, Տէր և Տիկին Թ. Նահապետեան, Ալալուճեան, Պալեան, Մանուէլեան, Բէսէտարեան, Չօխուրեան, Տէր Արթիւրեան, Պարտիզպանեան, Յովհաննէսեան ընտանիքները՝ թերթիս միջոցաւ իրենց շնորհակալիքը կը յայտնեն ամեն անոնց, որոնք հաճեցան ներկայ գտնուիլ հանդուցեալ

ԱՋՆՈՒԱՇՈՒՔ

Տ. ԲԱՐԹԻՅ ԿԱՆԱՊԵՏԵԱՆԻ իրենց ամուսնոյն, հօր, եղբոր մօրեղբոր և ազգականին յուզարկաւորութեան արարողութեանց։

Շնորհակալիք կը յայտնեն նաև ամէն անոնց ալ՝ որ այս տխուրաւթիւ հաճեցան անձամբ, նամակաւ և հեռագրով իրենց ցաւակցութիւնները յայտնել նահապետեան ընտանիքին և պարագաներուն։

«Արշալոյս» ի Խմբագրութիւնը իր խորունկ վշտակցութիւնը կը յայտնէ նահապետեան ընտանիքին, այն դառն կորստեան առթիւ։

Առաջիկայ թիւով «Արշալոյս» քանի մը անվով գծերու մէջ իր ընթերցողներուն պիտի տայ հանդուցեալ Այն. Բարթիկ էֆինտի նահապետեանի բարեմասնութիւններն, ու ազգային կեանքի մէջ ունեցած դործունէութիւնը։

ՄԻՇՏ ՈՒՇ ՄՆԱՅԱԾ

Միշտ ուշ մնացած ենք, ու միշտ զղջալու հարկին տակ։ Աւերուածները, քանդուածները, ազգային օճախին ահաւոր հրդեհումը, ու այսօր ազատութեան մեծ ժամը, դեռ չըկրցան արթնցնել մեր հաւաքական հոգիին մէջ կանխատեսող ու փրկարար, Գիտակցութիւնը։

Անհուն բան մը կը պակսի մեր ցեղին. պակասած է սկզբէն ի վեր։ Մեր իմացականութիւնը կոյր չէ գտնուած զարհուրելի Աղէտքին որ կիսակատար ազգ մը ըրաւ մեզ։ Ու մեր զգայնութեան մէջ անարձագանք չ'մնաց Յաւը որ լեցուց մեր երկիրը մէկ ծայրէն միւսը։ Գիտակցութիւնը կ'առքերը, մեռածներուն մէջ մոռցուած կեանքները որոնք հօգին տակ դեռ քանի մը անհուն վայրկեաններ պարեցան զիրենք զարնող ճօղանը չըլլալով պէտք եղածին չափ անգութ, այդ հոգեկենտրոն որ դիակներու գարշահոտութեանը մէջ երկարաձգուեցան, ու զորս ոչ ոք չսեց, արիւնտեցին մեր ամենուն ցաւագին ու աղետար ժողովուրդը։

Ու օր մը, հրաշալի օր մը, չենք դիտեր ինչպէս՝ ըսին մեզի որ ազատ էինք։ Ըսողներն ալ զարմացած էին։ Ազատարարները վերջէն գոյութեան եկան։ Առաջին անգամներ էր որ ստիպուած էինք բռնի հեղինակներ ստեղծելու գերագոյն մարդկային գեղեցկութեամբ երկի մը։ Եւ որովհետեւ գործը գեղեցիկ էր այնչափ՝ որչափ անակնկալ, մենէ ոմանք, իրենց խորհրդաւոր լռութիւններովը, ու սփինքսի կեցուածքներովը թող տունին մեզ որ մեր գիտազնայաշտ երեակայութիւնը զիրենք փոխարկէ փրկիչներու։

Ու սկսանք երգել, ու սկսանք ճառել։ Մեր ախօղ կորովը դրինք երգին մէջ։ Պրկուած շիղբով, վայրագօրնն, հոգեկենտրոնք։

Կը վախնամ որ նորէն ուշ պիտի մնամք։ Կորովի ու ճիգերու պղտիկ պաշարը որ ունինք պիտի վատնուի տիրացուութեան այն հզօր պէտքին համար զոր կեանքին անհրաժեշտ պայմանը ըրած ենք։

Եթէ ստրկութեան մէջ անկարող էինք ազատ ապրելու արուեստը սորվիլ, գոնէ այդ ազատութեան այս թանկագին վայրկեանին ըմբռնելու էինք անհուն կարելիութիւնները, արգաւանդութիւնը, մեծութիւնը մարդկային կեանքի մը։

Փոխանակ ասոր, ինչ կը տեսնենք այսօր։ Պառակտում ամէն կողմ, անկարգապահութիւն ամէն խաւերու մէջ, դաւադրական, եղբայրասպան խրտուածներ, մարդիկ՝ դեռ սուտով սպառազէն, վայրագօրէն շնական, ու ետական մտահոգութիւններով մօլեգւած։

Գիշեր ցերեկ ազատութեան վրայ խօսող մարդեր չեմ գիտեր ինչ միջնագրեան տրամաբանու-

թեան հասեր են այնպիսի ցաւագին հոգեկան վիճակի՝ որ անկարող կ'ըլլան կոր ըմբռնելու որ իրենց նուիրապետութեան գուրս որ և է մէկը կարենայ իրաւունք ունենալ։ Ճշմարտութիւնը հրենց մենաշնորհն է։ Ուրիշները իրաւունք չունին իրաւունք ունենալու։

Ո՞վ, ո՞ր գերագոյն ու տիրական մարդը պիտի հարկադրէ այս տրտում ու ժահարոյր քստին վրայ իր հզօր ու Աստուածային ձայնը, անընկճելի խօսքը եղբայրութեան ու մաքուր հոգեխառնումի։

Ուրիշ ցեղեր մեր շուրջը հաւաքական սքանչելի խոյանքով մը ձեռնարկած են արդէն իրենց ազգային տունը վերաշինելու գեղեցկացնել։ Մենք մեր փլած տան մէջ, մեր աւերակ ու ցուրտ օճախին առջև, իրարու դէմ սպառնական, կուսակցական դասակարգային ամուլ թինախնդրութիւններու մէջ դեռ կը յամենանք։

Զի՞ պիտի ըլլայ մէկը, այս կիսատուած, խողտողուած խաչուած ազգին մէջէն, մէկը որ բոլոր նեղ ու ամբարտաւան վարդապետութիւններէ ազատագրուած, գար ու ըսէր կեանքի խօսքը ու սիրոյ խօսքը այդ ամբողջար ուժերուն։

«Կեցէք։ Պէտք է որ ա՛լ կանգ առնէք։ Թող տուէք որ այս եզկելի, չարատանջ ազգը շունչ առնէ, ինքնամոլորուի։ Թող տուէք որ սրտացու ձեռքեր դարմանեն արիւնոյ վէրքերը։ Իագրեցէք ձեր պառակտումի, ու աներող ու մոլեգին վարդապետողի աներող գործը։ Կանգ առէք։ Երբ հայերուն գիտակցութիւնը արթնայ ազգովին համար պիտ պահանջեն ձեռքէ։ Պէտք դադարի անօրուտութիւններու մէջ մտխելէ ազնիւ խանդավառութիւնները, ինքնամոռաց ու սքանչելի խոյանքները խեղճ միամիտ, պաշտելի, կուրցած տղաքներու։ Հերիք բոլոր կեղտի ու մուրի լեռնացած զանգուածը որ իրարու նետեցէք վայրենի աններողութեամբ։ Զեր ձիւնեղէն գեղեցկութիւնը ու ձեր ընդդիմամտութիւնը խաւարակուռ զարհուրանքը, հաւասարապէս անտարբեր կէթ թողուն մեզ։ Ատեն է որ անցեալը մոռցուի իր բոլոր եղբայրագու ու եղբայրատեաց արհաւիրքովը։ Օտար ու բարբարոս ձեռքեր մեր տունը կը քանդէին, ու դուք չդադարեցաք իրար բզկտելէ։ Հերիք, Պէտք է որ ա՛լ դուք մեզի մտիկ ընէք։ Պէտք է որ եթէ խղճամիտ էք, ու անկեղծներ, եթէ հաւաքական շահը չէք ստորագրած ձեր տիրապետական փառասիրութիւններուն, պէտք է որ հրաժեշտ տաք ատ ձեր երեւակայած անհասելի գերազանցութիւններուն, ու գաք խառնուիք մեծ ազգային եղբայրութեան մը մէջ։

(Ա. ՄԱՄՈՒԼ) Ա. ՇԱԲԼԵԱՆ

ԱՋԳԱՑԻՆ ԼՈՐԵՐ

ՆԵՐԿԱՅՈՒՄ

Վաղը երեկոյ ի նպաստ «Նեղրա» Ընկերութեան Ծարէ Ապաւել-Աղիզի թատրոնին մէջ պիտի ներկայացուի «Սէն Տընի փողոցին ոճիւրը»։ Վարագոյրը պիտի բացուի ժամը 9ին։

Տմանքը կը վաճառուին թատրոնի կիշէն և «Նեղրա» անդամներուն քով։

ԵՐՈՒՍԱՂԻՄ

Կը ծանուցանեն մեզի թէ՛ նախորդ Կրօնական Ժողովոյ Ատենապետ Գրիգորիս Եպիսկոպոս Երուսաղեմի Ամենապատիւ Պատրիարքին իբր օգնական զրկուած է Պօլսէն։

Միաբանութիւնը՝ կ'երևի թէ դժգոհ մնալով Ն. Իերապատուութեան ներկայութեան, մեծամասնութեամբ որոշած է, ու 22 ըստարագրութեամբ հեռագրով մը պահանջած է Կ. Պօլսոյ Կեդրոնէն Գեր. Տէր Գէորգ Արքեպիսկոպոս Երեցեանի ընդ փոյթ Երուսաղէմ զրկուիլը, Սիօնի գործերը վարելու համար։

—Դարձեալ կը ծանուցուի թէ՛ Պետրոս վարդապետ Սարաճեանի գաղտնի ըրած մէկ կարգադրութեան համաձայն՝ ժառանգաւորաց վարձարանի աշակերտները բիրտրով և դանակներով իրարու վրայ յարձակած և զիրար վիրաւորած են։

Երուսաղեմէն այս նիւթերով հասած նամակները տեղւոյ անձկութեան պատճառաւ ուրիշ թիւերով պիտի հրատարակուի։

ԿԵՂ. ԱՋԳ. ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՍԻԱՆՆԵՐ

Ամեն. Պատրիարք Իգմիւրեան Սրբազան Պատիւ. Երեւոյ. Ժողովոյ վերջին թեր նստին մէջ յայտարարած է թէ՛ ինք գործելու տրամադրութիւն ունի, բայց Ազգ. Ժողովոյ համար ընտրուած անձինք չեն ուզեր խղճմտօրէն կատարել իրենց յանձնուած պարտականութիւնները։

Երեսփոխան Պ. Յ. Շահրիկեան՝ որ «Հայր մեր» ին ատեն ոտքի չելլեր, Երեսփոխանի աթոռը ներքեւէն չ'փակցնելու համար անուշտ, որ Պատրիարքի ընտրութեան ատեն ձեռնպահ կը մնայ, որ՝ աշխարհական Պատրիարք մը կուզէ եղբր, կառավարիչ որ պարտապանց ազգայիններուն պատիժ մը ստօրինուի...»

Իսկ մենք առիթը ներկայացած ատեն ըսած ենք և հիմայ ալ կը կրկնենք։

Ազգային վարչութեան անդամակցողներուն պէտք է որոշ ամսականներ վճարել։ Մենք Ազգ ենք կ'ըսենք, ու մեր վարիչները վճարելու ՍՆՏՈՒԿ մը չունինք և կըսպասենք որ իր օրական հացը ճարելու պարտաւորեալ մէկը իր գործերը ձգէ ու մեզի համար ձրիապէս աշխատի։

Գէթ մեր ազգային արժանապատուութիւնը կը պահանջէ որ ազգային «սնտուկ» մը ունենանք վարձատրելու համար կարգ մը «վարիչներ» որոնք կրնան պէտքեր ունենալ... Այսպէսով զեղծութիւններն ալ կը թեթեւան՝ ինչպէս կարելի է հաւատալ։

ԵՂԻՇԷ ՓՄՊՈՒՔՃԵԱՆ

ՇԱՐԷ ԱՊՏ ԷԼ ԱՋԻՉ ԴԱՐԱԴՈՒՆ ԴԻՄՍՅ

Միակ ներկայացուցիչն է Ազգային Հիւանդանոցի Սիկարի թղթերուն, կը վաճառէ մեծաքանակ և փոքրաքանակ։

1909 տարւոյ պատի և գրպանի օրացոյցներ գնելու համար միայն մեր վաճառատունը դիմելու է, և կամ դիւրութեան համար Արշալոյսի Տպարանը

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՍԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՄԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան դնելով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամայաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիւ ալ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ դնելը պարզապէս սխալիլ է .

Մէջ վաճառատունը վերջապէս, գիներու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարդացած Եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով կըզած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

ԱՐՄԻԻ

Ազգային, Գրական, և Բարձրագոյն կրթամասնայ հանդէս, որ կը հրատարակուի ամէն ամսոյ 1 ին և 16 ին . Տարեկան բաժնեգրին է արտասահմանի համար 7 ֆրանք, վեցամսեայն՝ 4 ֆրանք բացարձակապէս կանխիկ .

«ԱՐՄԻԻ» ը Ամերիկայի ամենէն անկախ անաչառ և անվտանգ հանդէսն է, որուն Խմբագիրը, միս միակ, կրցաւ արտասահմանական յեղափոխաբուծներ և դրամաշորթներ քօղամերկել ու ջախջախել .

«ԱՐՄԻԻ» ը շարունակ կը հրատարակէ գեղեցիկ բանաստեղծութիւններ, ու Եւրոպական գրականութենէն հոյակապ նորաձէպեր . Իր թիւ ժ. էն սկսեալ կը թարգմանէ «Յոթեր» անունով հայկական վէպ մը, որ 1901 ին լոյս տեսած է Անդրիոյ մէջ . Հեղինակը, Վարդենի կեղծանունով, մօրը կողմէն անդլուհի, հօրը կողմէն հայուհի մը, ակամաառաջ ըստ 1896 ի կոտորած ին զոր նըկարագրել կը ջանայ անոր ամբողջ սրտակեղծութեամբը . Վէպին հերոսը անհաս մը՝ կամ ժողովուրդ մը չէ, այլ Սուլթանին արխանապետութեան Կարմիր Արհաւիրքը .

«ԱՐՄԻԻ» ի բաժանորդագրուիլ ուղղորդներ թող գիտնն խմբագրութեան կամ ուղղակի իր հասցէին .

Editor of ARZIV
P.O.Box 2285 Boston - Mass .
Յ. Գ. Ապառիկ ապագրանքներ ու շարժութեան չեն առնուիր .

ԵՍԻՈՒ ԳԻՐՔԵՐ

«Արշարոյս» ի տպարանին մէջ, Շէրիք բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին հետեւեալ պրօշուրները .

- Ա. ՊԱԼԵԱՆ
- ԺՈՂՈՎՈՐԳԻՒՆ ՄԱՏԵՆԱԿՍՍԱՆԸ
- Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
- « 2 Հիւլէն 50 »
- Թիւ 3 պրօշուրը թէեւ հրաշալիք մը բայց ինչ ինչ նկատուածներով զանց կընենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար . գինն է՝ մէկ ֆրանք .
- Գիտել Արշարոյսի խմբագրութենէն զատ Հեղինակին հասցէին որ է .
- Mr. A. Balian
- Le Caire

ՕՐԹԷԼ ՏՐԱՊԻԶՈՆ

ԱՂԷՔՍԱՆԻՐԻԱ
Գանթօ, Սուզուլ Մանկաի
3 Թէթիկէր-էշ-Բաշարմի Վոդոց 3
Մանկաի Մզկիրիսի դէմը, Թիւ 3
Պանդոկապետ - Մ. Գէորգեան

Կը յանձնարարուի արգոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը զտնուող և օգուէտ գեղքով սոյն պանդոկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն .

Գիտնցէք անգամ մը և զոհ պիտի մնաք .
Գիները չափաւոր են . 28-55

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԻ

Գաւառներու համար Գործակալներու պէտք կայ գիտել Թերթիս Խմբագրութեան հասցէին .

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԸՐ


Պալաքի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՄԻՆԿԸՐներն են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է .

400 է աւելի վկայական և միտայնեով վաճառուած, Երաշխատուող մեքենաներ, ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանոցիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՐԻՆ ԵՒ ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ՆՏԻՎԱՊԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՄԻՆԿԸՐ յաճախողի թիւն
Գին ՁԱՓԱՌՈՐ



ՍԱՐԳԻՍ Յ . ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, ֆօֆօկրաֆներու և կազի վառարաններու .

Տասներկու տարիներ «Մինկըր» ընկերութեան ջով մեքենայարդարութեան զբաղել յետոյ, այժմ զինովաճառ Ձախարիս Գոնտատիթիւնուի ջով պաշտօնեայ է զէնքերու և մեքենայարդարման ճիւղին մէջ .

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարսպոյ ժամերը պիտի արածարէ կարի մեքենաներու, ֆօֆօկրաֆներու, կազի վառարաններու, նորոգութեանց և յարգարման .

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փութանակ հոս ու հոն թափառելու՝ կրնան գիտնլ իր տունը Շարէ Մուհամէտ Ալի Թահթ-էլ Ռապէհ կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարանի Հոյակապ Տնօրէններուն, և գարձալ գիւրութեան համար քարթ բօստալով մը կրնան գիտնլ «Արշարոյսի» Տպարանին - նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը և Տունին թիւը .

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ և փորձեր կատարուելէ յետոյ .
Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ .
19 - 50

ԱՄՃԱ ՊՕՂՈՍ Կ . ՕՀԱՆԵԱՆ ԳԱՆԹՐԷԳ ԷԼ ՏԻԳՐԷ Ն՝ 13

ՏԻԳՐԱՆ ԲԱՇԱՅԻ ՊԱՐՏԻՉԻՆ ԴԻՄՍՅ

Պատիւ ունի յայտարարելու իր յաճախորդներուն թէ՛ իր նոր ապագրանքները՝ մասնաւորապէս Իզմիրէն՝ հասած են . և ի գոհացուցի իրեն գիտնլներուն պատրաստ է հայթայթել Ձաթալ ու լալի շինած 30 տեսակի չափ անուշեղէններ (բէշէլ) և շուրուպներու զանազան տեսակներ, պատուական լողուճ պատէմի և ֆատիլը . Իզմիրի անարատ ձիթաիւղ և Անատոլի ընտիր արդար իւղ, անման թուղ . խոշոր լէպլէպի միշտ թարմ, չամիչի օլի (տիւղ) սև ու ճերմակ ընտիր զինի, օճառ, ծեծուած սուրճ, Չինական թէյ, մաստիքա, գոնեաք, և շն և շն . վարդի ու ծաղիկի ջուրեր . Իրեն գիտնլները կատարեալապէս դոհ պիտի մնան . գիտնցէք, փորձեցէք և տեսէք .